



ՓՈՔՐ և ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՆԴՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ» ոչ առևտրային կազմակերպության գործունեության նպատակն է նպաստել Հայաստանում ՓՄՁ ոլորտի զարգացմանը, գործարար մշակույթի և բարենպաստ գործարար միջավայրի ձևավորմանը, ոլորտի տեխնիկական և տեղեկատվական ապահովման մակարդակի բարձրացմանը: Հիմնադրամը ծառայություններ է մատուցում բիզնես համայնքին՝ տրամադրելով իր տեխնիկական, տեղեկատվական, խորհրդատվական ռեսուրսներն ու փորձը: Այն մի շարք ծրագրեր է իրականացրել դասընթացների կազմակերպման, շահերի պաշտպանության և ուսումնասիրությունների բնագավառում:

Ընդունված է ասել, որ փոքր ձեռնարկությունները տնտեսության ողնաշարն են: Դրանք նոր աշխատատեղերի ստեղծման աղբյուր և բիզնես գաղափարների փորձադաշտ են համարվում: Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ անցումը դեպի շուկայական տնտեսական համակարգ հաջող ու հեշտ է ընթանում այն դեպքում, երբ փոքր ձեռնարկատիրության զարգացումը դասվում է որպես առաջնահերթ խնդիր: Փոքր ձեռնարկությունները առավել զգայուն են բիզնես միջավայրի նկատմամբ: Դրանք առաջինն են տուժում վարչարարական չարաշահումներից կամ ծաղկում նպաստավոր պայմանների դեպքում: Հետևաբար, ՓՄՁ ոլորտի զարգացման աստիճանը երկրի տնտեսական վիճակի գնահատականն է:

Ակնհայտ է, որ ձեռնարկատիրության խթանումը անցումնային շրջանում որոշիչ է նաև կառուցվածքային և սոցիալական բարեփոխումների իրականացման համար: Չուր չէ, որ ոլորտի զարգացման խնդիրները ներառված են Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրում: Ոլորտի ներկայացուցիչների և անկախ փորձագիտական ուսումնասիրությունների վկայությամբ այսօր Հայաստանում, ինչպես և անցումնային շրջան վերապրող այլ երկրներում, ձեռներեցության համար միջավայրն ու պայմանները անբարենպաստ են: Հետևաբար, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը խթանող արդյունավետ քաղաքականության մշակումը հրատապ խնդիր է, մասնավորապես, որ Հայաստանը հավակնում է դառնալ մրցունակ, դինամիկ, գիտատար տնտեսություն ունեցող, կայուն տնտեսական աճ արձանագրող, բազում որակյալ աշխատատեղեր ապահովող և սոցիալապես բարգավաճ երկիր:

Հայաստանում ՓՄՁ պետական աջակցությունը հիմնվում է 2000 թ-ին ընդունված «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի վրա, ըստ որի.

1. ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունը իրականացվում է տարեկան ծրագրով:
2. Ծրագիրը մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը օրենքով սահմանված հիմնական ուղղություններին համապատասխան ելնելով տվյալ ժամանակահատվածում զարգացման գերակայություններից:
3. Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նշվում է պետական բյուջեում առանձին տողով:

Ծրագիրը իրականացնում է 2002-ին ստեղծված «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման Ազգային կենտրոն» հիմնադրամը պետությունից և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցների հաշվին:

Սակայն ոլորտի զարգացման տարեկան ծրագրերը չեն տալիս, և չեն էլ կարող տալ ոլորտի զարգացման տեսլականը: Դրանք կրում են զուտ նկարագրական բնույթ, չեն պարունակում կատարողականի վերահսկման համար պիտանի որևէ ցուցանիշ: Այլ կերպ ասած, դրանք ոչ թե ծրագրեր, այլ հռչակագրեր են:

Որպես վերը թվարկված խնդիրների լուծմանն ուղղված կառուցողական մոտեցման դրսևորում Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը՝ հենվելով սեփական և այլոց ուսումնասիրությունների արդյունքների վրա, մշակել է ՓՄՁ զարգացման ռազմավարական ծրագրի ձևաչափի նախագիծ, որը ներկայացնում է շահագրգիռ կողմերի քննարկմանը այն լրամշակելու և կատարելագործելու համար:

Ընդունված ձևաչափի հիման վրա կառավարությունը ՓՄՁ ոլորտի շահերը ներկայացնող ոչ պետական կառույցների հետ համատեղ ելնելով տվյալ ժամանակահատվածում ոլորտի զարգացման գերակայություններից կմշակի և շրջանառության մեջ կդնի ոլորտի զարգացման եռամյա Ծրագիրը, որը կնախանշի տարեկան ծրագրերի ուղղվածությունը, նպատակներն ու սպասվող արդյունքները:

ՆԱԽԱԳԻԾ

ՓՈՔՐ և ՄԻՋԻՆ ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի ձևաչափի համառոտ նկարագիրը:

Ծրագիրը նախատեսված է եռամյա ժամկետի համար, պարբերական վերանայման պայմանով:

Ծրագրի հիմքում ընկած է ժողովրդավարական կառավարման մասնակցային գործընթացի տրամաբանության շրջանակներում պետության և ՓՄՁ միջև գործընկերային փոխհարաբերությունների **սկզբունքը** :

Ծրագրի **նպատակն** է.

- Համապատասխանեցնել ոլորտի զարգացումը տնտեսական և սոցիալական ոլորտներում նախանշված նպատակներին:
- Ձևավորել ՓՄՁ – պետություն փոխհարաբերություններում փոխվստահության մթնոլորտ:
- Ներդաշնակեցնել և համակարգել ոլորտի վրա ազդեցություն ունեցող իշխանական բոլոր կառույցների գործունեությունը:
- Ներդաշնակեցնել և շաղկապել վարչարարական պրակտիկան ոլորտի գաղափարախոսության ու քաղաքականության հետ:
- Ապահովել ոլորտի զարգացման ընթացքի վերահսկման և գնահատման հնարավորությունը:
- Ապահովել հետադարձ կապը շահառու խմբերի հետ:

Ծրագիրը կենտրոնանում է հետևյալ **խնդիրների** վրա, յուրաքանչյուրի համար ներկայացնելով առկա իրավիճակը, սպասվող արդյունքը, պատասխանատու կառույց(ներ)ը և խնդրի լուծման համար հատկացվող ռեսուրսները.

1. ՓՄՁ ոլորտի օրենսդրական կարգավորում:

Այն ներառում է հետևյալ գործողությունները.

- ոլորտի զարգացման վրա պետության ուղղակի ազդեցությունը կանոնակարգող օրենսդրության կատարելագործում,
- ոլորտի զարգացումը խոչնդոտող վարչարարական չարաշահումները բացառող միջոցառումների մշակում և կիրառում,
- վարչարարական կառույցների գործելակերպի և պետական պաշտոնյաների վարքագծի նորմերի մշակում, ուսուցում և ներդրում,
- ոլորտը կարգավորող օրենսդրության ձևավորման գործընթացի մեջ ՓՄՁ ներկայացուցչական կառույցների ներգրավում,

2. ՓՄՁ ոլորտի զարգացման կանոնակարգում:

Այն ներառում է հետևյալ գործողությունները.

- կարիքների գնահատում,
- կառավարման ազգային, տարածքային և տեղական կառույցների միջև պատասխանատվության ոլորտների հստակ սահմանազատում,
- բոլոր մակարդակների պետական պաշտոնյաների գործողությունները կանոնակարգող հստակ հանձնարարականների մշակում և ներդրում.
- տեղական և տարածքային կառավարման մարմինների լիազորությունների ընդլայնում
- ոլորտի խնդիրների հստակ ձևակերպում,
- ոլորտի ներկայացուցչական կառույցների հետ կապերի զարգացում և ընդլայնում,
- ոլորտի զարգացման ընթացքի վերահսկում և գնահատում:

3. ՓՄՁ ոլորտի հարկային և մաքսային քաղաքականության կատարելագործում:

Այն ներառում է հետևյալ գործողությունները.

- պետություն-ՓՄՁ գործընկերային փախհարաբերությունների սկզբունքի վրա հիմնված ոլորտի զարգացումը խթանող հարկային և մաքսային քաղաքականության մշակում,
- ոլորտի զարգացումը խթանող ֆիսկալ քաղաքականության ձևավորում, պարզեցնելով գործառույթները, մեղմացնելով պահանջները և ապահովելով հարկային և մաքսային ռեժիմի թափանցիկությունն ու կայունությունը,
- հարկային և մաքսային օրենսդրության ձևավորման գործընթացի մեջ ոլորտի ներկայացուցչական կառույցների ներգրավում,
- հարկային և մաքսային օրենսդրության ոլորտը կարգավորող պետական քաղաքականության հետ ներդաշնակեցում,
- վարչարարության վերահսկման մեխանիզմի մշակում:

4. ՓՄՁ ոլորտի ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ապահովում:

Այն ներառում է հետևյալ գործողությունները.

- ֆինանսական (վարկային) ռեսուրսների շուկայի զարգացման խթանում,
- վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մեխանիզմի մշակում և ներդրում,
- լիզինգային ծառայությունների շուկայի ձևավորման և զարգացման խթանում,

- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՓՄՁ-ի ոլորտին ֆինանսական և ներդրումային աջակցության հնարավորության ապահովում:
5. ՓՄՁ ոլորտում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման խթանում:

Այն ներառում է հետևյալ **գործողությունները**.

- ֆինանսական խթանման մեխանիզմի մշակում և ներդրում,
 - ռիսկային ներդրումների համակարգի և մեխանիզմի մշակում ու ներդրում:
 - տեխնոլոգիական ջերմոցների ձևավորման խթանում:
6. ՓՄՁ ոլորտի արտադրանքի արտահանման խթանում:

Այն ներառում է հետևյալ **գործողությունները**.

- որակի կառավարման միջազգային ստանդարտների ներդրման խթանում,
- ցուցահանդեսներին մասնակցության խթանում:

Ծրագրի խնդիրների շարքում ընդգրկված են նաև.

7. ՓՄՁ ոլորտի տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների շուկայի զարգացման խթանումը:
8. ՓՄՁ ոլորտի տեխնիկական ծառայությունների շուկայի զարգացման խթանումը:
9. Հատուկ կարիքներ ունեցող սոցիալական խմբերին ՓՄՁ ոլորտի մեջ ներգրավելու մեխանիզմների մշակումն ու ներդրումը:

Այս խնդիրների լուծումը, մասնավորապես «բիզնես ինկուբատորների» ստեղծման միջոցով, կպահանջի ՓՄՁ ոլորտի շահերը ներկայացնող ոչ պետական կառույցների գործնական ներգրավման մեխանիզմի մշակում և ներդրում:

ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի և միջոցառումների նպատակաուղղվածության և հասցեականության ապահովման, ՓՄՁ ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման մեխանիզմների հստակեցման և ՓՄՁ ոլորտին առնչվող վիճակագրության վարման գործընթացների պարզեցման ու կատարելագործման խնդիրներից ելնելով ՓՄԲՀ-ն առաջարկում է փոփոխություն կատարել «ՓՄՁ զարգացման պետական աջակցության մասին» օրենքում սահմանելով ՓՄՁ սուբյեկտ համարվելու համար անհրաժեշտ պայմանը և ապա տալով ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը:

Հիմնադրամը քննարկման համար առաջարկում է «ՓՄՁ զարգացման պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի իր տարբերակը և, և կոչ է անում բոլոր շահագրգիռ կողմերին միավորել ջանքերը ուղղված երկրում ՓՄՁ ոլորտի զարգացման համար առավել նպաստավոր պայմանների ձևավորմանը:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Օ Բ Ե Ն Ք Ը

«ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի (5 դեկտեմբերի 2000 թվականի, ՀՕ-121, այսուհետև՝ օրենք) 2-րդ հոդվածի՝

ա) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր (առաջին) մասով՝

«Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտ են համարվում այն առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց կողմից մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների իրացման տարեկան շրջանառության ընդհանուր գումարը չի գերազանցում 400 մլն դրամը.»».

բ) 1-ին կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Վոքը՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը ավել է 5-ից և չի գերազանցում 50 մարդը:».

գ) 1-ին կետի «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը ավել է 50-ից և չի գերազանցում 100 մարդը:»:

դ) ուժը կորցրած ճանաչել 2-րդ կետը:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՓՄՁ-ի պետական աջակցությունը իրականացվում է տարեկան ծրագրով: Տարեկան ծրագիրը մշակվում է ՓՄՁ հեռանկարային զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի հիման վրա:

Ռազմավարական և տարեկան ծրագրերը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, սույն օրենքով սահմանված հիմնական ուղղություններին համապատասխան՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում զարգացման գերակայություններից, ներառյալ՝ ՓՄՁ ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծումը:

ՓՄՁ զարգացման տարեկան ծրագիրը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Տարեկան ծրագրի կատարման հաշվետվությունը ներկայացվում է տվյալ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության հետ:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Փոքր եւ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

«Փոքր եւ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի վերը շարադրված նախագիծը և սույն հիմնավորումը մշակել է «Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ» (ՓՄԲՀ) ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության շահերի պաշտպանությանն ուղղված իր առաքելությունը համաձայն:

Փոքր ու միջին ձեռնարկատիրությունը Հայաստանում ակտիվորեն զարգանում է, ինչի մասին է վկայում այն փաստը, որ համախառն ներքին արդյունքում դրա բաժինը կազմում է մոտ 40 տոկոս, իսկ արտահանման մեջ՝ 16 տոկոս: Ուստի, միկրո, փոքր և միջին ձեռնարկատիրությունը սոցիալական և տնտեսական առումով մեծ նշանակություն ունեն:

«Հայաստանում դժվար է հանդիպել մարդու, ով ցանկություն չունենա սեփական գործը ստեղծել: Սա նշանակում է սեփական ճակատագրի տերը լինելու շատ հզոր ներքին ձգտում, որը լուրջ խթան կարող է լինել փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման համար, եւ մենք գնահատում ենք դա», -ասել է ՀՀ նախագահը փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացմանը վերաբերող ոլորտի մի խումբ ներկայացուցիչների հետ վերջերս կայացած հերթական հանդիպման ժամանակ:

Ոլորտի զարգացումը նոր փուլ է մտել: Վերջին 3 տարիների ընթացքում ստեղծվել են շուրջ 20 հազար ՓՄՁ սուբյեկտներ, ավելացել է ոլորտի մասնաբաժինը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ)՝ 2004 թվականի առաջին կիսամյակին կազմելով շուրջ 40%՝ 1999 թվականի 17 %-ի դիմաց: Տնտեսական զարգացման գործընթացներին համապատասխան աճել է նաև ՓՄՁ սուբյեկտներում զբաղված աշխատողների միջին թվաքանակը: Սակայն դրանով հանդերձ ՓՄՁ սուբյեկտները դիմակայում են մի շարք խոչընդոտների, մասնավորապես.

- փոքր եւ միջին ձեռնարկություններում ստուգումների հաճախականությունը նվազեցնելու,
- երկարաժամկետ եւ ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրման,
- լիզինգային ծառայությունների ընդլայնման,
- մարզերի ձեռնարկատերերին գործարար խորհրդատվությամբ ապահովելու,
- միջին մասնագիտական կրթությամբ կադրերի պատրաստման,
- ՓՄՁ հետագա զարգացումը խթանող օրենսդրական մի շարք բարեփոխումները,

որոնք պետք է հաղթահարվեն և վերացվեն ի հաշիվ օրենսդրությամբ նախատեսված որոշակի արտոնությունների, ինչն անհրաժեշտություն է առաջացնում վերանայել դասակարգման չափորոշիչները՝ հնարավորին չափ մոտեցնելով դրանք Եվրոմիության չափորոշիչներին և միասնականացնելով տնտեսական գործունեության ոլորտները: Օրենքով ամրագրված և ոլորտի զարգացմանը նպաստող դասակարգման չափորոշիչներին վերաբերող առաջարկվող փոփոխություններն ուղղված են Հայաստանում ՓՄՁ պետական աջակցության, ինչպես նաև միջազգային եւ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների կողմից Հայաստանում ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի/միջոցառումների նպատակայնության ապահովմանը, ՓՄՁ ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման մեխանիզմների հստակեցմանը եւ ՓՄՁ ոլորտին առնչվող վիճակագրության վարման գործընթացների պարզեցմանն ու կատարելագործմանը:

Ոլորտի ներկայացուցիչների և անկախ փորձագիտական ուսումնասիրությունների վկայությամբ այսօր Հայաստանում, ինչպես անցումնային շրջան վերապրող այլ երկրներում ձեռներեցության համար միջավայրն ու պայմանները անբարենպաստ են: Հետևաբար, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը խթանող հստակ հասցեագրված, արդյունավետ ու հեռանկարային քաղաքականության և ռազմավարության մշակումը հրատապ խնդիր է:

Եվրոմիության չափորոշիչների համաձայն ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են առանց ճյուղային տարանջատման՝ հիմք ընդունելով աշխատողների թվաքանակը և շրջանառության ծավալը կամ հաշվեկշռային ցուցանիշը:

Ձեռնարկության դասը	Աշխատողների միջին թվաքանակը	Շրջանառությունը (մլն եվրո)	կամ	Հաշվեկշռային ցուցանիշը (մլն եվրո)
Միջին	< 250	≤ € 50		≤ € 43
Փոքր	< 50	≤ € 10		≤ € 10
Միկրո	< 10	≤ € 2		≤ € 2

Հարկ է նշել, որ Եվրոմիության չափորոշիչներ կիրառող երկրները հնարավորություն ունեն իրականացնելու համեմատական վիճակագրական վերլուծություն, ինչը տարբեր երկրներում ՓՄՁ ոլորտի զարգացման մակարդակի վերաբերյալ առավել հստակ պատկեր է ստեղծում՝ երկրի տնտեսության մեջ ՓՄՁ ոլորտի տեղի ու դերի որոշման առումով:

ՓՄԲ-ը խիստ կարևորում է ՓՄՁ սուբյեկտների ըստ երկու ցուցանիշի դասակարգումը՝ ելնելով Հայաստանում ՓՄՁ պետական աջակցության, միջազգային եւ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների կողմից Հայաստանում ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների նպատակայնության և հասցեականության ապահովման, ՓՄՁ ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման մեխանիզմների հստակեցման եւ ՓՄՁ ոլորտին առնչվող վիճակագրության վարման գործընթացների պարզեցման ու կատարելագործման խնդիրներից:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայացված պաշտոնական վիճակագրական տեղեկատվության (ըստ հաշվետվություն ներկայացրած կազմակերպությունների) վերլուծության, ինչպես նաեւ ՀՀ առևտրի եւ տնտեսական զարգացման նախարարության կողմից իրականացված ՓՄՁ ոլորտի ամենամյա վարչական մոնիտորինգի արդյունքների համաձայն 2003 թվականին իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում առկա իրավաբանական անձանց (այդ թվում՝ ձեռնարկությունների) եւ անհատ ձեռնարկատերերի ընդհանուր թվաքանակում ՓՄՁ սուբյեկտները կազմել են շուրջ 107 հազար կամ 95.2%, իսկ 2005 թվականի առաջին կիսամյակում՝ ավելի քան 114 հազար կամ 96.5%:

Առաջարկվող փոփոխությունները ոչ միայն չեն կարող նպաստել ՓՄՁ սուբյեկտներ հանդիսացող կազմակերպությունների շրջանակի ընդլայնմանը, այլև դուրս կմղեն թերի դասակարգման չափորոշիչների շնորհիվ դրանց շարքում հայտնված առևտրային կազմակերպությունները:

Երկրում ՓՄՁ ոլորտի տեսլականն ունենալու, զարգացման հեռանկարը հստակեցնելու նպատակով ՓՄԲ-ը առաջարկում է յուրաքանչյուր հինգ տարին մեկ մշակել և հաստատել ՓՄՁ ոլորտի Ջարգացման Ռ-ազմավարական ծրագիր, որը կիրականացվի տարեկան Ծրագրերով՝ ելնելով Ռ-ազմավարական ծրագրում նախանշված նպատակներից և տվյալ ժամանակահատվածում զարգացման գերակայություններից: